

զեղկելի եւ զտառապե(ա)լ հոգի թորոս որ զգիրս գրեցի. եւ զծնաւղսն իմ եւ զհարա(ղա)տ եղբարսն իմ յիշելոյ արժանի արարէք ով սբ. ընթերցողք յ(ար)տասուաթոր եւ մաքրափայլ աղաւթս ձեր առաջի զենլոյն Ք(րիստոս)ի Ա(ստուծո)յ մերոյ: Ազաչեմ եւ խոշորութեանս անմեղադիր լերուք»:

Գարեգին Սրբազան գրիչը անյայտ կը նկատէ, մինչ յիշատակարանին այս մասը թորոս կը յիշէ: Սակայն ինչ որ մեզ կը հետաքրքրէ հոս այն է թէ այս թորոս գրիչը Տարօնեցին է թէ ոչ: Յիշատակարանին համաձայն մենք չենք կասկածիր որ անոր իսկ կ'ակնարկուի: Յիշատակարանին ոճը զայն անկասկած կ'ընէ թորոս Տարօնեցիին իսկ ըլլալը:

Փիրղալէմեանի կը պարտինք յիշատակարանը Աստուածաշունչի մը, որ 1881-ին Բաղէչի Ամբուլու վանքը կը գտնուէր\*:

Ձ ե ո ա գ ր ի ն ե ր կ ա ր մ ի շ ա տ ա կ ա ր ա ն ի ն հ ա մ ա ձ ա յ ն . «Արդ եղև սկիզբն գրութեան սորա ի թվիս Ձ Հ Ձ (1327) ի յամսեան մայիսի ի յերեքշաբթի՝ տօնի երեւման խաչին, ի վանս Գլաճոր, յոր կոչի Աղբերց վանք, ընդ հովանեաւ սուրբ Նախավկային եւ սուրբ Գրիգորիս. եւ եղև աւարտ սմին ի սկըսեալ նոր ամին Ձ Հ Է (1328) յամսեան Օգոստոսի հինգն ի տօնի սրբոց վարդանանց: Եւ ետու գրել զսա ձեռամբ կուսակրօն քահանայի, իմաստուն գրչի եւ քաջ քարտուղարի Գաւթի Գետկեցոյ.» գրեալ Առաքել վարդապետ Հաղբատեցիի համար:

Այս ձեռագիրն ալ ծաղկեալ է թորոս Տարօնեցիէ որմէ կան սա յիշատակարանները: Եղեկիէլի մարգարէութեան վերջը. «Չտառապեալ թորոս գրիչ յիշեա ի Տէր Յիսուս Փրկիչ»: Մարկոսի վերջը. «Առաքեալ Հաղբատեցի եւ բարունի ևս թՊլիսի, աղօթք արա դու թորոսի, որ զգիրս ծաղկեցի»:

Խիստ ցաւալի է որ այս ձեռագրին վախճանը անծանօթ կը մնայ մեզ, որուն մանրանկարչական արուեստին մասին բնաւ զաղափար մը չէ տրուած:

Դարձեալ փիրղալէմեանի կը պարտինք թորոսի մէկ ուրիշ ձեռագիր աւետարանին յիշատակարանը որուն հանդիպած է ան 1881-ին Բաղէչի Սբ. Մարգիս եկեղեցին: Յիշատակարանէն կերեւնայ որ թէ գրիչը եւ թէ նկարիչը թորոս Տարօնեցի իսկ էր: Ահա յիշատակարանը:

«Փառք անծնին հօրն լուսոյ»:

«Գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառիս Ապահունեաց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին՝ եւ սրբոյն Սարգսի զօրավա-

(\*Անդ էջ 103-105):